ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԱՐԱՇԱՀԵԼՈՒ ԵՎ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Միսակ Մարկոսյան
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Քրեական իրավունքի գիտության մեջ և դատաքննչական պրակտիկայում շարունակում են վիճահարույց մնալ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական լիազորություններն անցնելու հանցակազմերի սահմանազատման չափանիշները: Դրանց վերաբերյալ միասնական մոտեցումների բացակայությունը մի շարք գիտնականների կողմից ներկայացվել է որպես այդ երկու հարակից հանցակազմերը միավորելու հիմնավորում[1]: Նշված հանցագործությունները մեկ միասնական հանցակազմի շրջանակներում միավորելու նպատակահարմարության մասին են խոսում նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր.օր.) 308-րդ և 309-րդ հոդվածների առաջին մասերով նախատեսված գրեթե նույնական պատիժները[2]: Հարկ է նշել, որ այդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը քր.օր.-ի 32-րդ գլխում («Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ») համարժեքության պատճառով միավորված են մեկ հոդվածում («Հոդված 375. Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը»): Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու հանցակազմերը մեկ հոդվածով են նախատեսվել նաև ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծում («Հոդված 410. Պաշտոնատար անձի կողմից իր իշխանությունը, լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը»)[3]:

Սույն հոդվածի շրջանակներում մեր առջև խնդիր ենք դրել ոչ թե հիմնավորել պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և դրանք անցնելու հանցակազմերի միավորման անհրաժեշտությունը, այլ ներկայացնել գործող իրավակարգավորումների պայմաններում քր.օր.-ի 308-րդ և 309-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների սահմանազատման չափանիշները: Դրա համար անհրաժեշտ է պարզել քննարկվող հանցակազմերի տարրերի և հատկանիշների հարաբերակցությունը: Հիշյալ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշների համադրմամբ կարող ենք անել հետևյալ պնդումները՝

1. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և դրանք անցնելու հիմնական անմիջական օբյեկտը և սուբյեկտը նույնական են:

2. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը օբյեկտիվ կողմից կարող է դրսևորվել ինչպես գործողությամբ (պաշտոնեական դիրքը ծառայության շահերին

---

[1] Տե՛ս, օրինակ, **Грибов А.С.** К вопросу об унификации уголовной ответственности должностных лиц, неправомерно использующих свое служебное положение (ст. 285, 286 УК РФ)// Актуальные вопросы борьбы с преступлениями. 2015 № 1, էջ 22-24; **Ремизов М.В.** Злоупотребление и превышение должностными полномочиями: нужны ли две отдельные статьи? Ярославль, 2005, էջ 16:

[2] Տարբերությունը միայն այդ հանցագործությունների համար նախատեսված տուգանքի չափերն են, մնացած երեք երկընտրելի պատժատեսակների ժամկետները համընկնում են:

[3] Տե՛ս https://www.e-draft.am/projects/496 (վերջին այցելությունը՝ 05.02.2019թ.):

հակառակ օգտագործելը), այնպես էլ անգործությամբ (ծառայողական պարտականությունները չկատարելը), իսկ պաշտոնեական լիազորությունները անցնելը՝ միայն գործողությամբ (այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակից):

3. Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու օբյեկտիվ կողմի մյուս պարտադիր հատկանիշները՝ հանրորեն վտանգավոր հետևանքը և պատճառական կապը, նույնական են, բացառությամբ այն դեպքի, երբ հետևանքը դրսևորվում է գույքային վնասի ձևով: Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դեպքում գույքային վնասի չափը կամ արժեքը պետք է գերազանցի հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը, իսկ պաշտոնեական լիազորությունները անցնելու դեպքում՝ հինգհարյուրապատիկի չափը:

4. Ե'վ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և' դրանք անցնելու սուբեյկտիվ կողմը բնութագրվում է մեղքի դիտավորյալ (ուղղակի կամ անուղղակի) ձևով, սակայն, ի տարբերություն պաշտոնեական լիազորություններն անցնելու, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու սուբեյկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև շարժառիթը (շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունը կամ խմբային շահերը):

Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և դրանք անցնելու հանցակազմերի սահմանազատումը դժվարություն չի ներկայացնում այն դեպքում, երբ պաշտոնատար անձի արարքը դրսևորվում է անգործության ձևով (քանի որ բացառվում է պաշտոնեական լիազորություններն անցնելու հանցակազմը), ինչպես նաև այն դեպքում, երբ բացակայում է շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունը կամ խմբային շահը (քանի որ բացառվում է պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմը):

Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու հանցակազմերի սահմանազատումը կարող է բարդություններ առաջացնել այն դեպքում, երբ պաշտոնատար անձը կատարել է այնպիսի գործողություն, որը մի կողմից կարող է գնահատվել որպես պաշտոնեական դիրքի օգտագործում ծառայության շահերին հակառակ (քր.օր.-ի 308-րդ հոդվածով նախատեսված արարք), իսկ մյուս կողմից՝ որպես լիազորությունների շրջանակից ակնհայտորեն դուրս եկած գործողություն (քր.օր.-ի 309-րդ հոդվածով նախատեսված արարք), և այդ գործողությամբ էական վնաս է պատճառվել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին: Կարծում ենք, որ այս դեպքում քր.օր.-ի 308-րդ և 309-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների իդեալական համակցությունը բացակայում է, քանի որ համակցություն կազմող հանցագործություններից յուրաքանչյուրը պետք է ունենա իր ինքնուրույն հետևանքը, իսկ քննարկվող իրավիճակում առաջացած հետևանքը մեկն է: Հարց է ծագում՝ ինչպե՞ս պետք է որակել պաշտոնատար անձի այդպիսի գործողությունը՝ պաշտոնեական լիազորությունների չարաշահու՞մ, թե՞ անցում:

Այդ հարցին պատասխանելու համար նախ անհրաժեշտ է մեկնաբանել, թե քր.օր.-ի 308-րդ հոդվածի իմաստով ինչ է նշանակում «պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը», այնուհետև՝ մեկնաբանել, թե քր.օր.-ի 309-րդ հոդվածի իմաստով ինչ է նշանակում «այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել լիազորությունների շրջանակից», և վերջապես անհրաժեշտ է պարզել այս երկու հոդվածներով նախատեսված հանցակազմերի օբյեկտիվ կողմի վերոնշյալ դրսևորումների հարաբերակցությունը:

Քր.օր.-ի 308-րդ հոդվածում որպես պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դրսևորում համարվող գործողություն է նշված **պաշտոնեական դիրքը** ծառայության շահերին հակառակ օգտագործելը, իսկ, օրինակ, Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 285-րդ հոդվածում՝ **ծառայողական լիազորությունն-**

որը ծառայության շահերին հակառակ օգտագործելը: Այդ առումով պետք է նշել, որ պաշտոնական լիազորությունները չարաշահելու հանցակազմի հետազոտության պատմահիրավական և համեմատահիրավական մեթոդների կիրառմամբ հանգում ենք այն հետևության, որ «պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը» և «պաշտոնական լիազորությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելը» ձևակերպումներն իրենց ծավալով չեն նույնանում:

Այսպես, թե՛ ՀԽՍՀ 1961 թ. քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածում («Իշխանությունը կամ պաշտոնական դիրքն ի չարը գործադրելը») և թե՛ ՌԽՖՍՀ 1960 թ. քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածում («Իշխանությունը կամ պաշտոնական դիրքը չարաշահելը») որպես արարք նախատեսված էր պաշտոնատար անձի կողմից իր **պաշտոնական դիրքը** հակառակ ծառայության շահերի օգտագործելը:

Սակայն, եթե ՀՀ գործող քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածում («Պաշտոնական լիազորությունները չարաշահելը») արարքի բնորոշումը մնաց անփոփոխ, ապա ՌԴ գործող քրեական օրենսգրքի 285-րդ հոդվածում («Պաշտոնական լիազորությունները չարաշահելը») նշվեց ոչ թե պաշտոնական դիրքը, այլ **ծառայողական լիազորությունները** ծառայության շահերին հակառակ օգտագործելու մասին:

Օրենսդրական ձևակերպումների նման փոփոխությունը ռուսական քրեական իրավունքի գիտության մեջ մեկնաբանվել է որպես պաշտոնական լիազորությունների չարաշահման հանցակազմի շրջանակների նեղացում: Այսպես, օրինակ, ըստ Լ.Վ.Ինոգամովա-Խեգայի՝ «պաշտոնական դիրքի օգտագործում» հասկացությունն ավելի լայն էր և բացի պաշտոնական լիազորությունների օգտագործումից՝ ներառում էր նաև պաշտոնից բխող հեղինակության օգտագործումը[1]:

Ծառայության շահերին հակառակ պաշտոնական դիրքի օգտագործման համանման մեկնաբանություն տրվել է նաև հայրենական գրականության մեջ. պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կարող է դրսևորվել ինչպես պաշտոնատար անձի կողմից իրեն վերապահված **լիազորությունները** ծառայության շահերին հակառակ օգտագործելու, այնպես էլ **պաշտոնից բխող հեղինակությունն** օգտագործելու ձևով[2]:

ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» 2003 թ. Կոնվենցիան[3] նույնպես որպես պաշտոնական դիրքի չարաշահման դրսևորումներ առանձնացնում է ծառայողական լիազորությունները չարաշահելը և պաշտոնական դիրքը չարաշահելը: Այսպես, Կոնվենցիայի 19-րդ հոդվածը («Պաշտոնական դիրքը չարաշահելը») սահմանում է. «Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ որպես քրեական իրավախախտում ճանաչվի **ծառայողական լիազորությունները** կամ **պաշտոնական դիրքը չարաշահելու** արարքը, երբ դա կատարվել է դիտավորությամբ, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից իր գործառույթները կատարելիս, ի խախտումն օրենսդրության, որևէ գործողություն կամ որևէ գործողություն չկատարելը՝ անձամբ իր համար կամ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար որևէ ոչ իրավաչափ առավելություն ստանալու նպատակով»:

Ստացվում է, որ քր.օր.-ի 308-րդ հոդվածի վերնագրի ձևակերպումն իր ծավալով ավելի նեղ է, քան դիսպոզիցիայի ձևակերպումը, քանի որ վերնագրում նշված է միայն պաշտոնական լիազորությունների չարաշահման մասին, իսկ դիսպոզիցիայում տրված՝ «պաշտոնական դիրքի օգտագործում» ձևակերպումը ներառում է ոչ

---

[1] Տե՛ս **Иногамова-Хегай Л. В.** Служебные преступления как единичные деяния и как множественность преступлений//Обшество и право. 2017, № 1(59), էջ 20:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս. Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 790:

[3] Հայաստանի Հանրապետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2007 թ. ապրիլի 7-ին:

միայն պաշտոնական լիազորությունների չարաշահումը, այլև պաշտոնից բխող հեղինակության և ազդեցության օգտագործումը՝ առանց որևէ կոնկրետ լիազորություն օգտագործելու:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ քր.օր.-ի 308-րդ հոդվածի իմաստով պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կարող է դրսևորվել երկու ձևով՝

1. Երբ պաշտոնատար անձը ծառայության շահերին հակառակ օգտագործում է իր այս կամ այն կոնկրետ լիազորությունը:

2. Երբ պաշտոնատար անձն իր պաշտոնական դիրքը օգտագործում է ծառայության շահերին հակառակ առանց որևէ կոնկրետ լիազորություն դրսևորելու:

Բացահայտենք այդ երկու դրսևորումներից յուրաքանչյուրի բովանդակությունը:

Պաշտոնական լիազորությունը ծառայության շահերին հակառակ օգտագործելը ոչ այլ ինչ է, քան այդ լիազորության չարաշահում: Այսպես, հայերենում չարաշահել նշանակում է ի չարը գործադրել, չարարկել, հանցավոր՝ օրենքին հակասող գործողություններ՝ զանցանքներ կատարել, չարաշահումներ կատարել[1]:

Պետք է նշել, որ «լիազորություն» հասկացության բովանդակությունը օրենսդրորեն բացահայտված չէ: Մասնագիտական գրականության մեջ լիազորությունը բնորոշվում է որպես իրավունքների և պարտականությունների անքակտելի միասնություն, որոնք սահմանված են նորմատիվ-իրավական ակտերով, իրացվում են օրենքների հիման վրա և ի կատարումն օրենքների, և որոնցով պաշտոնատար անձն օժտված է իր՝ որպես իշխանության ներկայացուցչի կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառույթները իրականացնելու համար[2]: Մեկ այլ բնորոշման հանածայն՝ լիազորությունը՝ որպես իրավական կատեգորիա, պաշտոնատար անձի համար միաժամանակ և՛ իրավունք է, և՛ պարտականություն օրենքով նախատեսված դեպքերում գործելու այնպես, ինչպես նախատեսված է այդ օրենքով[3]:

Վերոնշյալ բնորոշումներից կարելի է հանգել հետևության, որ պաշտոնատար անձն այս կամ այն գործողությունը կատարելու կամ չկատարելու՝ օրենքով իրեն վերապահված հնարավորությունից կարող է օգտվել միայն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, օրենքով նախատեսված կարգով և ի կատարումն օրենքով նախատեսված խնդիրների ու գործառույթների:

Այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից լիազորության **իրավաչափ** իրականացումն այն իրավիճակն է, երբ միաժամանակ պահպանված են հետևյալ պայմանները՝

1) պաշտոնատար անձին օրենքով վերապահված է եղել նման լիազորություն,

2) լիազորությունն իրականացնելիս առկա են եղել օրենքով դրա համար նախատեսված հիմքերն ու պայմանները,

3) լիազորությունն իրականացվել է օրենքով սահմանված կարգով (գործողությունների կատարման ժամկետների, հերթականության, գրավոր ձևի, այլ պաշտոնատար անձի հետ համաձայնեցման պահանջի պահպանումը և այլն),

4) լիազորությունն իրականացվել է ի կատարումն օրենքով նախատեսված նպատակների և խնդիրների:

---

[1] Տե՛ս **Աղայան Է. Բ.** Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976, էջ 1157:

[2] Տե՛ս **Греков К.А.** Соотношение категорий «злоупотребление должностными полномочиями» и «превышение должностных полномочий» в уголовном праве России// Юристъ – правоведъ, 2007, № 2, էջ 54:

[3] Տե՛ս Юридическая энциклопедия / Под ред. М.Ю. Тихомирова. М., 2001, էջ 654:

Կարծում ենք, որ առաջին երեք պայմաններից որևէ մեկի խախտման դեպքում խոսք լինել չի կարող պաշտոնատար անձի կողմից իր **լիազորությունը** ծառայության շահերին հակառակ օգտագործելու մասին, քանի որ տվյալ **կոնկրետ իրավիճակում** նա այդ լիազորությունը չի էլ ունեցել: Այլ կերպ ասած՝ պաշտոնատար անձը չի կարող չարաշահել այն, ինչ չունի, և պաշտոնեական լիազորության չարաշահումը կարող է առկա լինել միայն այն դեպքում, երբ առաջին երեք պայմանները պահպանված են, և խախվել է միայն չորրորդ պայմանը:

Այլ կերպ ասած՝ պաշտոնեական լիազորությունների իրավաչափ իրականացումն ու դրանց չարաշահումը օբյեկտիվ կողմով իրարից չեն տարբերվում: Երկու դեպքում էլ պաշտոնատար անձը գործում է օրենքով նախատեսված հիմքերի և պայմանների առկայությամբ և պահպանում է լիազորության իրականացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգը: Ի տարբերություն լիազորության իրավաչափ իրականացման՝ լիազորության չարաշահման դեպքում պաշտոնատար անձն այն իրականացնում է ոչ թե ի կատարումն օրենքով նախատեսված նպատակների և խնդիրների, այլ ծառայության շահերին հակառակ: Այսինքն՝ պաշտոնեական լիազորությունը ծառայության շահերին հակառակ օգտագործելը դրսևորվում է այնպիսի գործողություն կատարելով, որը կհամարվեր իրավաչափ, եթե պայմանավորված լիներ ծառայողական անհրաժեշտությամբ: Ըստ այդմ, կարելի է փաստել, որ պաշտոնատար անձը ծառայության շահերին հակառակ կարող է օգտագործել իր **հայեցողական** լիազորությունները, որոնց իրականացման կոնկրետ հիմքերն ու պայմանները օրենքով ամրագրված չեն: Հակառակ դեպքում, եթե լիազորությունը կարող է իրականացվել միայն օրենքով նախատեսված կոնկրետ հիմքերի և պայմանների առկայության դեպքում, իսկ վերջիններս բացակայում են, ապա այդպիսի լիազորության չարաշահում, մեր կարծիքով, հնարավոր չէ:

Այդ առումով ճիշտ չենք համարում ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 16.10.2009թ. № 19 որոշման 15-րդ կետում ամրագրված այն դիրքորոշումը, համաձայն որի՝ որպես պաշտոնեական լիազորությունների չարաշահում պետք է որակվեն այն պաշտոնատար անձի գործողությունները, որը, շահադիտական կամ այլ անձնական շահագրգռվածությունից ելնելով, կատարում է իր պաշտոնեական լիազորությունների շրջանակի մեջ մտնող գործողություններ՝ վերջիններիս կատարման համար պարտադիր համարվող պայմանների և հիմքերի բացակայությամբ (օրինակ՝ վարորդական իրավունքի վկայականի տրամադրում պարտադիր քննություն չհանձնած անձանց)[1]: Գտնում ենք, որ եթե **տվյալ կոնկրետ իրավիճակում** (այլ ոչ թե ընդհանրապես) պաշտոնատար անձը չի ունեցել տվյալ գործողությունը կատարելու (վարորդական իրավունքի վկայական տրամադրելու) հիմք (պարտադիր քննությունը հանձնելու փաստը), ապա այդ գործողության կատարումը չի կարող գնահատվել որպես պաշտոնեական լիազորության չարաշահում:

Այդ առումով լիովին համամիտ ենք Պ. Ս. Յանիի այն մոտեցմանը, ըստ որի՝ պաշտոնեական լիազորությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելը պաշտոնատար անձի կողմից այնպիսի գործողություն է, որը նա լիազորված է կատարել, այսինքն՝ ունի իրավունք և պարտականություն դա կատարելու, և առկա են դրա համար հիմք հանդիսացող՝ օրենքով նախատեսված հատուկ հանգամանքները[2]:

---

[1] Տե՛ս Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 16.10.2009г. № 19 «О судебной практике по делам о злоупотреблении должностными полномочиями и о превышении должностных полномочий»// http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_93013/ (վերջին այցելությունը՝ 05.02.2019թ.):

[2] Տե՛ս **Яни П.С.** Разграничение должностного злоупотребления и превышения должностных полномочий // Законность. 2007. N 12, էջ 12:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու առաջին դրսևորման (որևէ կոնկրետ լիազորությունը ծառայության շահերին հակառակ օգատգործելու) դեպքում պաշտոնատար անձն օգտագործում է իր պաշտոնեական դիրքից **իրավաբանորեն** բխող հնարավորությունները և իր հանրորեն վտանգավոր արարքը քողարկում է այս կամ այն լիազորությունն իրականացնելու անվան տակ:

Ինչ վերաբերում է պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու երկրորդ դրսևորմանը (առանց որևէ կոնկրետ լիազորություն ծառայության շահերին հակառակ օգատգործելու), ապա, կարծում ենք, դա այն իրավիճակն է, երբ պաշտոնատար անձն օգտագործում է իր պաշտոնեական դիրքից ոչ թե **իրավաբանորեն** բխող, այլ **փաստացի** հնարավորությունները:

Այսպես, դեռևս 20-րդ դարի 70-ականներին Բ. Դ. Զդրավոմիսլովը գրել է, որ պաշտոնեական դիրքի չարաշահումը ներառում է ոչ միայն պաշտոնատար անձի կողմից իր իրավասության սահմաններում կատարվող գործողությունները, այլև իր պաշտոնից բխող հեղինակության ընձեռած հնարավորությունների և այլ պաշտոնատար անձանց հետ ունեցած կապերի օգտագործումը[1]: Ա. Ս. Գրիբովը պաշտոնեական դիրքի չարաշահումը բնորոշում է որպես պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական կապերի, պաշտոնից բխող հեղինակության օգտագործում, այսինքն՝ այնպիսի գործողությունների կատարում, որոնք իրավաբանորեն չեն մտնում նրա իրավասության մեջ, սակայն փաստացի պայմանավորված են նրա զբաղեցրած պաշտոնով[2]: Լ. Վ. Ինոգամովա-Խեգայը պաշտոնից բխող հեղինակության օգտագործումը բնորոշում է որպես այնպիսի անձանց հետ այդ հեղինակությամբ պայմանավորված կապերի օգտագործումը, ովքեր կոնկրետ հարցով օժտված են որոշակի լիազորություններով[3]:

Հայրենական գրականության մեջ նույնպես ընդունվում է, որ բացի պաշտոնեական լիազորությունները օգտագործելուց՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել նաև պաշտոնից բխող հեղինակությունն օգտագործելով[4]:

Պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ պաշտոնից բխող հեղինակության և ազդեցության օգտագործումը չի կարող որակվել որպես պաշտոնեական հանցագործություն, քանի որ տվյալ դեպքում պաշտոնատար անձն իր որևէ կոնկրետ լիազորություն չի չարաշահում[5]: Սակայն կարծում ենք, որ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնից բխող հեղինակությունը և ազդեցությունը օգտագործելիս որևէ կոնկրետ լիազորություն չօգտագործելու հանգամանքը դեռևս չի նշանակում, որ նրա գործողությունները անմիջականորեն կապված չեն իր պաշտոնեական դիրքը օգտագործելու հետ: Նման դեպքերում անձն օգտագործում է ոչ թե իր՝ որպես սուբյեկտիվ իրավունքներով օժտված քաղաքացու հեղինակությունը, այլ իր պաշտոնի հեղինակությունը և ազդեցությունը, ինչն էականորեն մեծացնում է այլ անձանց (այդ թվում՝ նրա ծառայողական ենթակայության տակ չգտնվող) վրա ազդեցություն գործելու հնարավորությունը:

---

[1] Տե՛ս **Здравомыслов Б.Д.** Должностные преступления. Понятие и квалификация. - М., 1975, էջ 63-64:

[2] Տե՛ս **Грибов А.С.** Նշվ. աշխ., էջ 22:

[3] Տե՛ս **Иногамова-Хегай Л. В.** Նշվ. աշխ., էջ 20:

[4] Տե՛ս Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները: Գիտագործնական մեկնաբանություններ: Եր.: «Տիգրան Մեծ», 2015, էջ 25:

[5] Տե՛ս **Голубев В.В.** Злоупотребление должностными полномочиями как основа отечественной коррупции // Законодательство. - 2002. - № 6:

Այդ առումով հարկ է նշել, որ պաշտոնից բխող հեղինակությունն օգտագործելիս պաշտոնատար անձը խախտում է նաև օրենսդրությամբ նախատեսված՝ իր ծառայողական վարքագծին վերաբերող մի շարք սահմանափակումներ՝ դրանով վնաս պատճառելով հենց պետական ծառայության շահերին: Այսպես, օրինակ, «Հանրային ծառայության մասին» 2011 թ. ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը («Հանրային ծառայության մասին» 2018 թ. ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը) սահմանում է, որ հանրային ծառայողին արգելվում է իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար, ոչ ծառայողական նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը: Դժվար է պնդել, որ այս օրենսդրական սահմանափակումների և պահանջների խախտումը կապված չէ պաշտոնատար անձի ծառայողական գործունեության հետ և չի զուգորդվում պաշտոնից բխող հեղինակության և պաշտոնի՝ փաստացի ընձեռած հնարավորությունների օգտագործմամբ:

Որպես ասվածի հիմնավորում բերենք հայրենական դատական պրակտիկայից վերցված մի շարք օրինակներ:

Պաշտոնից բխող ազդեցությունը ենթակա պաշտոնատար անձի նկատմամբ օգտագործելու օրինակ է ոստիկանության տարածքային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Ս.Գ.-ի գործը: Վերջինս քաղաքացի Դ.Դ.-ին տեղեկացրել է, որ ինքը թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված քրեական գործերի բացահայտման ուղղությամբ տարվող աշխատանքների առիթով ղեկավարության կողմից արժանացել է խիստ նախազգուշացումների, և եթե այդ քրեական գործերով բացահայտում չունենա, հնարավոր է նույնիսկ ազատվի աշխատանքից: Ս.Գ.-ն Դ.Դ.-ին խնդրել է օգնել իրեն՝ որևէ վայրից քաղելու եղանակով ապօրինի ձեռք բերել թմրամիջոց պարունակող «կանեփ» տեսակի բույսի տերևներ, ապա ոստիկանության աշխատակիցների կողմից բերման ենթարկվելուց և թմրամիջոցը հայտնաբերելուց հետո հայտարարել, թե այն իրեն իրացրել է քաղաքացի Ա.Ղ.-ն: Դ.Դ.-ն համաձայնվել է: Ս.Գ.-ի հանձնարարությամբ նույն բաժնի օպերլիազոր Ա.Ի.-ն, իմանալով Ս.Գ.-ի և Դ.Դ.-ի պայմանավորվածության մասին, իր ավտոմեքենայով Դ.Դ.-ին ուղեկցել է ոստիկանության բաժին: Ս.Գ.-ի աշխատասենյակում Դ.Դ.-ն գրպանից հանել է նախապես իր քաղած «կանեփ» տեսակի բույսերի զանգվածը, լցրել է նրա սեղանին, որից հետո Ա.Ի.-ն կշռել է այն, և երբ զանգվածի քաշը հասել է շուրջ 0,3 գրամի մոտակայքը (մոտավորապես 0,27 գրամ), Ա.Ի.-ն ասել է, որ դա բավարար է, իսկ զանգվածի մնացած մասը սեղանից սրբել ու նետել է աղբարկղը: Ս.Գ.-ի հրահանգով Դ.Դ.-ն այն փաթաթել է ծխախոտի տուփի փայլաթիթեղի մեջ ու դրել տաբատի հետևի աջ գրպանը: Ս.Գ.-ն ասել է նաև, որ պետք է հրավիրեն ընթերականեր ու կատարեն անձնական խուզարկություն, որպեսզի իր մոտ «հայտնաբերեն» այդ թմրանյութը: Քիչ անց հրավիրվել են երկու ընթերակա, որոնց ներկայությամբ կատարված անձնական խուզարկությամբ Դ.Դ.-ի մոտ «հայտնաբերվել» է դեղնականաչավուն զանգվածը[1]:

Ներկայացված օրինակում Ս.Գ.-ն իր պաշտոնեական դիրքի ընձեռած փաստացի հնարավորությունները օգտագործել է ծառայության շահերին հակառակ, քանի որ, պաշտոնից բխող ազդեցությունն օգտագործելով, ծառայողական անհրաժեշտությամբ չպայմանավորված հանձնարարություն է տվել իր ենթակա պաշտո-

[1] Գործի փաստական հանգամանքները առավել մանրամասն տե՛ս www.datalex.am// ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2018 թվականի մայիսի 17-ի դատավճիռը ԼԴ4/0017/01/18 գործի վերաբերյալ (վերջին այցելությունը՝ 05.02.2019թ.):

նատար անձին՝ Ա.Ի.-ին, կատարել է ծառայողական անհրաժեշտությունից չբխող դատավարական գործողություններ և հանցագործությունների բացահայտման խնդիրը իրականացնելու փոխարեն արհեստականորեն ստեղծել է Դ.Դ.-ին իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու հիմք:

Համանման մեկ այլ օրինակում պաշտոնատար անձինք պաշտոնից բխող ազդեցությունն օգտագործել են իրենց համար ենթակա չհամարվող անձի նկատմամբ: Այսպես, ըստ գործի նյութերի, ոստիկանության բաժնի պետ Վ.Մ.-ն, սպասարկվող տարածքում կատարված հանցագործությունների բացահայտման բացասական ցուցանիշներ չունենալու, այլ ցուցանիշներն առերևույթ բարձր ներկայացնելու անձնական շահագրգռվածությամբ, կարիերիստական դրդումներով, խմբային շահերից ելնելով, իր օպերատիվ գծով տեղակալ Վ.Ն.-ի հետ նախնական համաձայնությամբ, պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ: Վ.Մ.-ն և Վ.Ն.-ն ոստիկանության բաժին են հրավիրել քաղաքացի Ս.Հ.-ին և իբր բարիդրացիական հարաբերությունների համար փոխադարձ ծառայություններ մատուցելու հորդորով Վ.Մ.-ի աշխատասենյակում համոզել, դրդել են ապօրինաբար որևէ տեղից ձեռք բերել, իր գրպանում պահել, փոխադրել զգալի չափերով մարիխուանա տեսակի թմրամիջոց, որպեսզի կարողանան իրականությունը խեղաթյուրելով ձևակերպել, թե, իբր, ձեռնարկված օպերատիվ հետախուզական աշխատանքների արդյունքում հիշյալ թմրամիջոցը հայտնաբերվել է նրան բերման ենթարկելուց հետո կատարված անձնական խուզարկության ժամանակ, և կարողանան արձանագրել հանցագործության բացահայտման դեպքը:[1] Ակնհայտ է, որ Վ.Մ.-ն և Վ.Ն.-ն Ս.Հ.-ի վրա ներգործել են հենց իրենց պաշտոնի ընձեռած փաստացի հնարավորություններն օգտագործելով. Ս.Հ.-ին ոստիկանության բաժին հրավիրելիս նրանք հանդես են եկել որպես պաշտոնատար անձինք, և Ս.Հ.-ն համաձայնել է կատարել հիշյալ հանցագործությունը՝ ակնկալելով Վ.Մ.-ից և Վ.Ն.-ից, որ վերջիններս, իրենց պաշտոնեական դիրքն օգտագործելով, հետագայում փոխադարձ ծառայություն կմատուցեն իրեն:

Հարկ է նշել նաև, որ պաշտոնեական դիրքի ընձեռած փաստացի հնարավորությունների օգտագործումը չի սահմանափակվում միայն ենթակաների կամ այլ անձանց վրա ունեցած ազդեցությունը և պաշտոնից բխող հեղինակությունն օգտագործելով: Դա կարող է դրսևորվել նաև ի պաշտոնե հասանելի դարձած ծառայողական տեղեկատվությունը ծառայության շահերին հակառակ օգտագործելով: Որպես օրինակ կարելի է բերել Մ.Ո.-ի գործը: Վերջինս, զբաղեցնելով ՀՀ ոստիկանության տարածքային բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի պաշտոնը, մարզային քննչական վարչությունից ստացված գրությամբ տեղեկացել է, որ իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող Ս.Թ.-ի որդին քննչական վարչության վարույթում քննվող քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը և հայտարարվել հետախուզում: Ս. Թ.-ն գնացել է ՀՀ ոստիկանության տարածքային բաժին և հանդիպել Մ.Ո.-ին՝ որդու վերաբերյալ քննվող քրեական գործի ընթացքի մասին տեղեկություններ ստանալու համար: Խոսակցության ընթացքում Մ.Ո.-ն Ս.Թ.-ին նախազգուշացրել է որդուն հայտնաբերելու նպատակով վերջինս բնակարան օպերատիվ խումբ ուղարկելու մասին՝ փորձելով այդ կերպ իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող Ս.Թ.-ի որդուն զերծ պահել իրավապահ մարմինների կողմից հայտնաբերվելուց և հնարավոր կալանավորումից: Այդ մասին տեղեկանալուց հետո Ս.Թ.-ն զանգահարել է կնոջը և նրան հայտնել Մ.Ո.-ի հետ ունեցած խոսակցության մասին,

[1] Գործի փաստական հանգամանքները առավել մանրամասն տե՛ս www.datalex.am// ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հուլիսի 18-ի դատավճիռը ԳԴ5/0004/01/16 գործի վերաբերյալ (վերջին այցելությունը՝ 05.02.2019թ.):

որից հետո կազմակերպել են հետախուզման մեջ գտնվող որդու փախուստը բնակության վայրից: Մեղադրյալին հայտնաբերելու նպատակով բնակարան այցելած ոստիկանության աշխատակիցները, բնականաբար, չեն կարողացել հայտնաբերել հետախուզվողին[1]:

Ինչպես երևում է այս օրինակից, պաշտոնատար անձն առանց իր որևէ կոնկրետ լիազորություն չարաշահելու, ոչ ծառայողական նպատակներով օգտագործել է բացառապես իր պաշտոնական դիրքի ընձեռած փաստացի հնարավորությունները, մասնավորապես՝ ծառայողական տեղեկատվության հասանելիությունը: Կարծում ենք՝ պաշտոնատար անձի վերոնշյալ գործողությունների հետևանքով պետական ծառայության շահերին պատճառված վնասն ավելի քան ակնհայտ է:

Միևնույն ժամանակ այստեղ անհրաժեշտ է կատարել մի կարևոր շեշտադրում. պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքի ընձեռած փաստացի հնարավորությունների օգտագործումը ծառայության շահերին հակառակ կարող է որակվել քր.օր.-ի 308-րդ հոդվածով բացառապես այն դեպքում, երբ դա անմիջականորեն կապված է իր ծառայողական գործունեության հետ: Այդ մոտեցումն արտացոլվել է դեռևս ԽՍՀՄ Գերագույն դատարանի 30.03.1990թ. № 4 որոշման մեջ, որի 10-րդ կետի համաձայն՝ պաշտոնական չարաշահում կարող են համարվել միայն պաշտոնատար անձի այնպիսի գործողությունները, որոնք բխել են նրա ծառայողական լիազորություններից և կապված են եղել այն իրավունքների և պարտականությունների կատարման հետ, որոնցով տվյալ պաշտոնատար անձը օժտված է եղել զբաղեցրած պաշտոնի ուժով[2]:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք տալ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու երկրորդ դրսևորման հետևյալ բնորոշումը: Առանց որևէ կոնկրետ լիազորություն օգտագործելու պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը նշանակում է, որ պաշտոնատար անձն օգտագործում է իր պաշտոնական դիրքի ընձեռած **փաստացի** հնարավորությունները, և այդ արարքը անմիջականորեն կապված է իր ծառայողական գործունեության հետ: Ընդ որում, մեր կարծիքով, պաշտոնական դիրքի ընձեռած փաստացի հնարավորությունների սպառիչ ցանկ սահմանելը գործնականորեն հնարավոր չէ. որպես այդպիսիք կարող են հանդես գալ պաշտոնից բխող հեղինակությունը, իր ենթակաների, գործընկերների և այլ անձանց վրա ունեցած ազդեցությունը, ծառայողական տեղեկատվության հասանելիությունը, զենքի, հատուկ միջոցների առկայությունը և այլն:

Այսպիսով, պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կարող է դրսևորվել ինչպես որևէ կոնկրետ լիազորություն օգտագործելու ձևով, այնպես էլ առանց դրա:

Պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու և պաշտոնական լիազորությունները անցնելու հարաբերակցությունը պարզելու նպատակով փորձենք մեկնաբանել նաև, թե քր.օր.-ի 309-րդ հոդվածի իմաստով ինչ է նշանակում «այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել լիազորությունների շրջանակից»:

---

[1] Գործի փաստական հանգամանքները առավել մանրամասն տե՛ս www.datalex.am// Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2018 թվականի հունիսի 22-ի դատավճիռը ԱՐԱԴ /0012/01/18 գործի վերաբերյալ (վերջին այցելությունը՝ 05.02.2019թ.):

[2] Տե՛ս Постановление Пленума ВС СССР от 30 марта 1990 года № 4 «О судебной практике по делам о злоупотреблении властью или служебным положением, превышении власти или служебных полномочий, халатности и должностном подлоге»// http://docs.pravo.ru/document/view/137061/25491039/ (վերջին այցելությունը՝ 05.02.2019թ.):

ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 16.10.2009թ. № 19 որոշման 19-րդ կետի համաձայն՝ պաշտոնեական լիազորությունների անցումը կարող է դրսևորվել պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելիս այնպիսի գործողությունների կատարմամբ, որոնք՝

- վերաբերում են այլ պաշտոնատար անձի (ավելի բարձր կամ հավասար պաշտոն զբաղեցնող) լիազորություններին,
- կարող են կատարվել միայն օրենքում կամ ենթաօրենսդրական ակտում նշված հատուկ հանգամանքների առկայության դեպքում (օրինակ՝ հրազենի գործադրում անչափահասի նկատմամբ, եթե վերջինիս գործողությունները իրական վտանգ չէին ստեղծել այլ անձանց կյանքի համար),
- պաշտոնատար անձի կողմից կատարվել են միանձյա, սակայն կարող են կատարվել միայն կոլեգիալ կարգով կամ այլ պաշտոնատար անձի կամ մարմնի հետ օրենքով սահմանված կարգով համաձայնեցնելու դեպքում,
- ոչ ոք ոչ մի իրադրությունում իրավունք չունի կատարելու[1]:

Պաշտոնեական լիազորությունները անցնելու հանցակազմի օբյեկտիվ կողմի համանման մեկնաբանություն տրվել է նաև հայրենական մասնագիտական գրականության մեջ[2]:

Պաշտոնեական լիազորություններն անցնելու վերոնշյալ չորս հնարավոր դրսևորումները դժվար չէ սահմանազատել պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու առաջին դրսևորումից՝ որևէ կոնկրետ լիազորությունը ծառայության շահերին հակառակ օգտագործելուց: Բանն այն է, որ որևէ կոնկրետ լիազորությունը ծառայության շահերին հակառակ օգտագործելու դեպքում պաշտոնատար անձը պետք է օրենքով օժտված լինի այդ լիազորությամբ (ինչը բացակայում է պաշտոնեական լիազորությունները անցնելու առաջին և չորրորդ դրսևորումների դեպքում), պետք է առկա լինեն տվյալ գործողության կատարման՝ օրենքով նախատեսված հիմքերը և պայմանները (ինչը բացակայում է պաշտոնեական լիազորությունները անցնելու երկրորդ դրսևորման դեպքում), և այդ գործողությունը պետք է կատարվի օրենքով նախատեսված կարգի պահպանմամբ (ինչը բացակայում է պաշտոնեական լիազորությունները անցնելու երրորդ դրսևորման դեպքում):

Քր.օր.-ի 308-րդ և 309-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի սահմանազատման դժվարություններն ի հայտ են գալիս այն դեպքում, երբ փորձում ենք պարզել պաշտոնեական լիազորութունները անցնելու վերոնշյալ չորս դրսևորումների հարաբերակցությունը պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու երկրորդ դրսևորման հետ (երբ պաշտոնատար անձն օգտագործում է ոչ թե որևէ կոնկրետ լիազորություն, այլ իր պաշտոնեական դիրքի ընձեռած փաստացի հնարավորությունները):

Այսպես, թե՛ մասնագիտական գրականության մեջ, թե՛ դատաքննչական պրակտիկայում ընդունված է, որ պաշտոնատար անձի գործողությունը կարող է որակվել որպես պաշտոնեական լիազորությունների անցում միայն այն դեպքում,

---

[1] Տե՛ս Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 16.10.2009г. № 19 «О судебной практике по делам о злоупотреблении должностными полномочиями и о превышении должностных полномочий»// http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_93013/ (վերջին այցելությունը՝ 05.02.2019թ.):

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս. Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 795; Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները: Գիտագործնական մեկնաբանություններ: Եր.: «Տիգրան Մեծ», 2015, էջ 40-41:

երբ այն կապված է եղել նրա ծառայողական գործունեության հետ, երբ նա հանդես է եկել ոչ թե որպես մասնավոր, այլ պաշտանատար անձ[1]:

Ընդ որում, մի շարք հեղինակների կարծիքով, պաշտոնատար անձի կողմից կատարված գործողության և նրա ծառայողական գործունեության միջև կապն արտահայտվում է հենց նրանում, որ տվյալ գործողության կատարումը պաշտոնատար անձի համար հնարավոր է դարձել իր պաշտոնեական դիրքի ընձեռած փաստացի հնարավորությունների շնորհիվ: Այսպես, Ա.Ս.Գրիբովը գրում է. «Պաշտոնատար անձի կողմից կատարված գործողությունը կարող է որակվել որպես պաշտոնեական լիազորությունների անցում միայն այն դեպքում, երբ այն կապված է եղել ծառայողական լիազորությունների իրականացման հետ: Այդ կապն արտահայտվում է նրանում, որ պաշտոնատար անձը գործել է իր զբաղեցրած պաշտոնեական դիրքի շնորհիվ»[2]: Ըստ Վ.Բորկովի՝ այդ կապն արտահայտվում է նրանում, որ պաշտոնեական լիազորությունների անցումը միշտ էլ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական խնդիրների իրականացման խեղաթյուրված զարգացում է եղել[3]: Իր մեկ այլ աշխատանքում հեղինակը նշում է, որ պաշտոնեական լիազորություններն անցնելիս պաշտոնատար անձը հանցագործության օբյեկտին վնաս պատճառելու հնարավորություն է ստանում իր կարգավիճակի, համազգեստի, ծառայողական վկայականի, հրազենի, հատուկ միջոցների շնորհիվ[4]:

Հատկանշանական է, որ ՀՀ գլխավոր դատախազի՝ «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի նոյեմբերի 19-ի № 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 19.01.2017թ. թիվ 3 հրամանի համաձայն՝ պաշտոնեական լիազորությունների անցումը դասվել է կոռուպցիոն հանցագործությունների շարքին: Նույն հրամանի 1-ին կետի համաձայն՝ քրեական օրենսգրքով նախատեսված արարքը կոռուպցիոն հանցագործություն համարելու չափանիշներից մեկն այն է, որ հանցավոր արարքը կատարվել է ծառայողական դիրքի ընձեռած հնարավորություններն օգտագործելով[5]: Պետք է նշել նաև, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի 410-րդ հոդվածի դիսպոզիցիայում թվարկված երկընտրելի արարքներից վերջինը, որը բնութագրական է գործող քր.օր.-ի 309-րդ հոդվածով նախատեսված արարքին, ունի հետևյալ ձևակերպումը՝ իր ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով իր լիազորություններից չբխող արարք կատարելը: Այսինքն՝ նախագծում տվյալ հոդվածում նույնպես առկա է այն տրամաբանությունը, որ պաշտոնատար անձի կողմից իր լիազորություններից չբխող արարք կատարելը (գործող քր.օր.-ի ձևակերպմամբ՝ պաշտոնեական լիազորությունները անցնելը) պետք է կատարված լինի ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ պաշտոնեական լիազորությունները անցնելու յուրաքանչյուր դեպքում պաշտոնատար անձն օգտագործում է իր պաշտոնեական դիրքի ընձեռած **փաստացի** հնարավորությունները: Եվ քանի որ պաշտոնեական լիազորությունների անցումը չի կարող բխել ծառայողական անհրաժեշ-

---

[1] Տե՛ս, օրինակ, Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները: Գիտագործնական մեկնաբանություններ: Եր.: «Տիգրան Մեծ», 2015, էջ 43, **Утевский Б.С.** Общее учение о должностных преступлениях. М., 1948, էջ 327-328:

[2] Տե՛ս **Грибов А.С.** Նշվ. աշխ., էջ 23:

[3] Տե՛ս **Борков В.Н.** Разграничение злоупотребления должностными полномочиями (ст. 285 УК РФ) и превышения должностных полномочий (ст. 286 УК РФ). Методические рекомендации. Омск, 2013, էջ 20:

[4] Տե՛ս **Борков В. Н.** Проблемы квалификации преступлений, предусмотренных статьями 285 и 286 УК РФ// Уголовное право. - 2008. - N 3. - էջ 19-24:

[5] Տե՛ս http://www.prosecutor.am/myfiles/files/Hraman3.pdf (վերջին այցելությունը՝ 05.02.2019թ.):

տությունից[1], կարող ենք փաստել նաև, որ լիազորությունները անցնելու յուրաքանչյուր դեպքում պաշտոնատար անձն իր պաշտոնական դիրքն օգտագործում է ծառայության շահերին հակառակ[2]: Այսպես, օրինակ, դատական պրակտիկայից «որակվել են որպես պաշտոնական լիազորությունների չարաշահում այն հիմնավորմամբ, որ նրանք իրենց պաշտոնական դիրքի ընձեռած փաստացի հնարավորությունները օգտագործել են ծառայության շահերին հակառակ: Միևնույն ժամանակ բոլոր երեք օրինակներում էլ պաշտոնատար անձինք նաև անցել են իրենց լիազորությունները, քանի որ կատարել են իրենց ծառայողական գործունեության հետ կապված այնպիսի գործողություններ, որոնք ոչ ոք ոչ մի իրադրությունում իրավունք չուներ կատարելու (պաշտոնական լիազորությունները անցնելու չորրորդ դրսևորումը):

Վերոգրյալի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ գործող օրենսդրական կարգավորման պայմաններում պաշտոնական լիազորությունները չարաշահելու և դրանք անցնելու հանցակազմերը մասնակիորեն համընկնում են: Որպես համընկնող հատկանիշներ (բացի օբյեկտից, հանրորեն վտանգավոր հետևանքից, պատճառական կապից, սուբյեկտից և մեղքի ձևից) հանդես են գալիս քր.օր.-ի 308-րդ հոդվածով նախատեսված գործողության երկրորդ դրսևորումը (պաշտոնական դիրքի ընձեռած փաստացի հնարավորությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելը) և 309-րդ հոդվածով նախատեսված գործողությունը (գործողությունը, որն ակնհայտորեն դուրս է եկել պաշտոնական լիազորությունների շրջանակից): Համադրելով պաշտոնական լիազորությունները չարաշահելու և դրանք անցնելու հանցակազմերի մյուս բոլոր հատկանիշները՝ հանգում ենք հետևության, որ քր.օր.-ի 308-րդ հոդվածով նախատեսված համընկնող հատկանիշը (պաշտոնական դիրքի ընձեռած փաստացի հնարավորությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելը) հատուկ է քր.օր.-ի 309-րդ հոդվածով նախատեսված համընկնող հատկանիշի (պաշտոնական լիազորությունների շրջանակից ակնհայտորեն դուրս եկած գործողության) համեմատությամբ, քանի որ սուբյեկտիվ կողմից բնութագրվում է լրացուցիչ հատկանիշի՝ շարժառիթի առկայությամբ:

Ասվածը չի նշանակում, որ պաշտոնական լիազորությունները չարաշահելու հանցակազմն **ամբողջությամբ վերցված** հատուկ է պաշտոնական լիազորությունները անցնելու հանցակազմի վերաբերությամբ: Քր.օր.-ի 308-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչելու դեպքում 309-րդ հոդվածը «կծածկի» միայն 308-րդ հոդվածով նախատեսված արարքի մի մասը (պաշտոնական դիրքի ընձեռած **փաստացի** հնարավորությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելը), սակայն չի «ծածկի» 308-րդ հոդվածով նախատեսված արարքի հետևյալ երկու դրսևորումները՝ պաշտոնական դիրքի **իրավաբանորեն** ընձեռած հնարավորությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելը (որևէ կոնկրետ պաշտոնական լիազորություն օգտագործելու միջոցով) և ծառայողական պարտականությունները չկատարելը:

Այսպիսով, ամփոփելով սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք ձևակերպել պաշտոնական լիազորութ-

---

[1] Եթե, իհարկե, բացակայում է ծայրահեղ անհրաժեշտության վիճակ:

[2] Պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու մասին առավել մանրամասն տե՛ս «Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները: Գիտագործնական մեկնաբանություններ»: Եր.: «Տիգրան Մեծ», 2015, էջ 25; Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 16.10.2009г. № 19 «О судебной практике по делам о злоупотреблении должностными полномочиями и о превышении должностных полномочий», П. 15// http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_ 93013/ (վերջին այցելությունը՝ 05.02.2019թ.):

յունները չարաշահելու և պաշտոնական լիազորությունները անցնելու հանցակազմերի սահմանազատման հետևյալ չափանիշները:

1. Պաշտոնատար անձի դիտավորյալ արարքը, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին, ենթակա է որակման քր.օր.-ի 308-րդ հոդվածով, եթե այն կատարվել է շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով և դրսևորվել է հետևյալ երեք ձևերից որևէ մեկով կամ մի քանիսով՝

ա) պաշտոնական դիրքի **իրավաբանորեն** ընձեռած հնարավորությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելը (որևէ կոնկրետ պաշտոնական լիազորություն օգտագործելու միջոցով),

բ) պաշտոնական դիրքի ընձեռած **փաստացի** հնարավորությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելը (առանց որևէ կոնկրետ պաշտոնական լիազորություն օգտագործման),

գ) ծառայողական պարտականությունները չկատարելը:

2. Պաշտոնատար անձի դիտավորյալ արարքը, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին, ենթակա է որակման քր.օր.-ի 309-րդ հոդվածով այն դեպքում, եթե այն դրսևորվել է պաշտոնական դիրքի ընձեռած **փաստացի** հնարավորությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելու ձևով, և բացակայել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունը կամ խմբային շահերը:

КРИТЕРИИ РАЗГРАНИЧЕНИЯ СОСТАВОВ ЗЛОУПОТРЕБЛЕНИЯ ДОЛЖНОСТНЫМИ ПОЛНОМОЧИЯМИ И ПРЕВЫШЕНИЯ ДОЛЖНОСТНЫХ ПОЛНОМОЧИЙ

Мисак Маркосян
начальник кафедры уголовного права и криминологии
Академии Образовательного комплекса полиции Республики Армения,
кандидат юридических наук, доцент

В науке уголовного права и судебно-следственной практике нередко возникают трудности в квалификации злоупотребления должностными полномочиями и превышения должностных полномочий. В литературе также нет единого мнения по вопросам разграничения составов данных преступлений и целесообразности существования самостоятельных статей в Уголовном Кодексе, регламентирующих ответственность за злоупотребление должностными полномочиями и их превышение.

В статье проводится анализ составов злоупотребления должностными полномочиями и превышения должностных полномочий. Автор, основываясь на соответствующих уголовно-правовых нормах, материалах уголовных дел, а также мнениях, высказанных в юридической литературе, представляет собственную позицию по поводу критериев разграничения составов злоупотребления должностными полномочиями и превышения должностных полномочий по уголовному законодательству Республики Армения.

THE CRITERIA OF DELIMITATION OF ABUSE OF OFFICIAL AUTHORITY AND EXCEEDING OFFICIAL AUTHORITIES

Misak Markosyan
Head of the Chair of Criminal Law and Criminology,
Academy of the Educational Complex of the RA Police, PhD, associate professor

Difficulties related to the qualification of abuse of official authority and exceeding official authorities often arise in Criminal Law science and judicial-investigative practice. In scientific literature there is no unified approach on delimitation of abovementioned crimes and on expediency of existence of separate articles in Criminal Code regulating the responsibility for abuse of official authority and for their exceeding.

An analysis of corpora delicti of abuse of official authority and exceeding official authorities has been carried out. Author, based on appropriate criminal legal norms, materials of criminal cases, and opinions expressed in literature, has presented his own approach regarding to criteria of delimitation of abuse of official authority and exceeding official authorities in accordance with the legislation of the Republic of Armenia.

Բանալի բառեր - պաշտոնատար անձ, պաշտոնեական դիրք, լիազորության չարաշահում, լիազորության անցում, քրեական օրենսգիրք, հանցակազմերի սահմանազատում, հանցագործության որակում
Ключевые слова: должностное лицо, должностное положение, злоупотребление полномочием, превышение полномочия, Уголовный Кодекс, разграничение составов, квалификация преступления
Key words: an official, official authority, abuse of official authority, exceeding official authorities, Criminal Code, delimitation of corpora delicti, qualification of crime